տանց գործը լինի։ Այս մատուռն շատ գեղեցիկ է, համեմատ սիւներով, և այլն։ Այսոր մտ փոքրիկ մատուռ մի ևս կայ, որ Մարտինոս քահանայապետին կ'ընծայուի, որ նոյնպէս աքսորուած է 'ի Հռովմայ 'ի քարահանքս Ինքիրմանի։

Սևաստապոլ իր պատմական մահարձանօք՝ Քերսոնէսիս և Իրքիրմանով, Մալախով բարձամբ և հրաշալի նաւահանգստով 26 տարի երեսի վրայ մնալէն վերջը, այժմ վերստին տէրութեան մեծ խնամքով կը շինուի, կամ թէ գրուցեմ իբրև փիւնիկ հաւ՝ իւր մոխրէն կամ աւերակաց մէջէն՝ նորափետուր կը զարդարուի. վերջին երեք տարիներուս մէջոց 700 էն աւելի մեծամեծ շէնքեր, քան զառաջինս առաւել վայելչութեամբ կը փայլին։ Կրանիտեայ սալայատակն՝ առաջուան կրախառն ամպի նման փոշին իջոյց, քաղաքին ամէն կողմ քաղցրահամ ջրոյ ագուցայք և շատրուանք՝ հարաւային բարկ արևուն ներգործութիւնը մեղմելով՝ ոգի կու տան դալարեաց և ծառոց, միով բանիւ այդ բնութեան նշանաւոր անկիւնն՝ տակաւ պիտի ստանայ իւր վայելուչ կերպարանը, եթէ վերստին քանդիչ ձեռք մի չապականէ զնա։

Շատ չի կենար նաև 'ի Սևաստապոլ. երկու ժամէն մեկնեցաւ Յեւպատորիայ, ուր ժամը եօթին հասանք։ Այս քաղաքս թէպէտ և ունի իւր առանձին յատկութիւնները՝ մաքուր և առողջարար օդոյն և քաղցրահամ ջրոյն հետ 'ի միասին կապտամորթ գառներ, որոց միսն քարցրահաչակ լինելէն զատ, անուանի և յարգի է սոցա մորթն ընդ համբրէն Ռուսաստան. մեծամեծ աղահան լիճեր, և յօդացաւի դէմ աղային ցեխեր. սակայն և այնպէս Ղրիմու յետամնաց քաղաքաց կարգէն է, յամր և